ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ (ՌԵԱԴՄԻՍԻԱՅԻ) ՄԱՍԻՆ» 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 19-ԻՆ ԲՐՅՈՒՍԵԼՈՒՄ ԿՆՔՎԱԾ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԿԻՐԱՐԿՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԿԱՄ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2013 թվականի ապրիլի 19-ին, և ուժի մեջ է մտել 2014 թվականի հունվարի 1-ին: Համաձայնագրի 20-րդ հոդվածի 1-ին կետը նախատեսում է. «*Չխախտելով սույն Համաձայնագրի ուղղակի կիրառելիությունը՝ անդամ պետության կամ Հայաստանի դիմումի հիման վրա՝ Հայաստանը և անդամ պետությունը կազմում են կիրարկող արձանագրություն, որը նաև կարգավորում է, ի թիվս այլ հարցերի, հետևյալը՝*

*ա) իրավասու մարմինների նշանակումը, սահմանային անցակետերին և կոնտակտային անձանց վերաբերյալ տեղեկությունների փոխանակումը,*

*բ) ուղեկցությամբ վերադարձի պայմանները՝ ներառյալ երրորդ երկրի քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց ուղեկցությամբ տարանցումը,*

*գ) միջոցները և փաստաթղթերը՝ ի հավելումն Համաձայնագրի 1-4-րդ հավելվածներում թվարկվածների,*

*դ) հետընդունման ձևերը՝ արագացված ընթացակարգերի ներքո,*

*ե) հարցազրույցների ընթացակարգը*»:

Հայաստանի Հանրապետության Կառավարության և Լեհաստանի Հանրապետության Կառավարության միջև «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» 2013 թվականի ապրիլի 19-ին Բրյուսելում կնքված համաձայնագրի կիրարկման արձանագրությունը ներկայացնում է մանրամասն կանոններ Համաձայնագրի կիրարկման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության և Լեհաստանի Հանրապետության միջև հարաբերությունների մասով: Կիրարկման Արձանագրության մեջ օգտագործվող տերմինները և արտահայտությունները մեկնաբանվում են այնպես, ինչպես սահմանված են Համաձայնագրում:

Հատկանշական է, որ Հայաստանի հետ մուտքի արտոնագրերի ազատականացման շուրջ երկխոսության գործընթացի մեկնարկի համատեքստում ընթացող բանակցություններում, ի թիվս այլ առանցքային հարցերի, ԵՄ կողմից կարևորվում է ԵՄ երկրներում առանց թույլտվության գտնվող ՀՀ քաղաքացիների վերադարձի աջակցության հարցում Հայաստանի Հանրապետության պատրաստակամությունը: Այդ նպատակով կառավարությունը ջանքեր է գործադրում վերադարձի, այդ թվում՝ հետընդունման (ռեադմիսիայի) համաձայնագրերի կիրարկման գործընթացն արդյունավետ իրականացնելու ուղղությամբ:

Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին համաձայնագիրը կիրարկող արձանագրություններ ստորագրվել են Հայաստանի Հանրապետության և հետևյալ պետությունների միջև՝ Բենիլյուքսի պետություններ (Բելգիայի Թագավորություն, Լյուքսեմբուրգի Մեծ Դքսություն, Նիդերլանդների Թագավորություն), Էստոնիայի Հանրապետություն, Ֆրանսիայի Հանրապետություն, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն, Չեխիայի Հանրապետություն, Բուլղարիայի Հանրապետություն, Լիտվայի Հանրապետություն:

Հաշվի առնելով վերոգրյալը 2021թ. հոկտեմբերի 29-ին ստորագրված Հայաստանի Հանրապետության Կառավարության և Լեհաստանի Հանրապետության Կառավարության միջև «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» 2013 թվականի ապրիլի 19-ին Բրյուսելում կնքված համաձայնագրի կիրարկման արձանագրության հաստատումը կամ վավերացումը Հայաստանի Հանրապետության վարած արտաքին քաղաքականության առումով նպատակահարմար է:

**ՀՀ արտաքին գործերի**
**նախարարի տեղակալ**

Recoverable Signature

X 

ՊԱՐՈՒՅՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Signed by: HOVHANNISYAN PARUYR 1512730076

**Պարույր Հովհաննիսյան**